

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բառասկզբում (անկախ վանկերի քանակից) սովորաբար ա-ն մնում է անփոփոխ:

Օրինակ՝ ազգ>ասկ, ասեղն>ասեղ, արիւն>արուն, աղաչանք>աղաչանք¹, արծաթ>առծաթ, անօթութիւն>անօթութուն, ապրուստ>ապրուստ և այլն: Բառամիջում՝ հրեշտակ>խըրիշտակ, հպարտ>խըպարտ, պարապ>պարապ, թագ>թագ /հոգևորականի/, թաղ>թաղ /թաղամաս/, թակ>թակ /միս ծեծելու աման/, աղաման>աղաման, ապառաժ>ապառաժ և այլն:

Բառավերջում մաքուր ա է արտասանվում էսա, էտա, էնա, ցուցականների մոտ, ինչպես նաև ասա>ասա, արա>երա, աղա>աղա, կարդա>կառթա, սիրեա>սիրա, գրեա>գ'ըրա հրամայական եղանակի եզակի թվի բայածներում:

Բարբառում ա-ն հաճախ փոխվել է մ-ի (ոչ հնչույթի արժեքով):

Նշված ա>մ փոփոխության մասին առաջին անգամ գիտական բացատրություն է տվել ակադեմիկոս Յ.Աճառյանը իր «Քննություն Վանի բարբառի» աշխատության մեջ¹:

Հին հայերենի ա-ի դիմաց որոշ բարբառներում հանդես է գալիս առաջնային շարքի ա: Աճառյանը այդ երևույթը բացատրում է հետևյալ կերպ.

«Գրաբարի ք, գ, դ, ծ, ջ բաղաձայները Վանի բարբառում բառավերջում դառնում են պ, կ', տ, ծ, ճ և նրանց կողքին գտնվող ա ձայնավորը դառնում է ա, իսկ պ, կ, տ, ծ, ճ մնում են անփոփոխ, և նրանց կողքին գտնվող ա ձայնավորն էլ է մնում անփոփոխ:

Ուրեմն ըստ Աճառյանի, գրաբարյան ձայնեղ պայթականներին և պայթաշփականներին հաջորդող քմային արտասանություն ունեցող ա հնչյունի հանդես գալը պետք է բացատրել պայթականների և պայթաշփականների խլացմամբ: «Աճառյանի օրենքը» գործում է նաև Դիադինի բարբառում:

Բացառություն են կազմում «բա» կապակցություն ունեցող բամպասել և բամպաս արմատ ունեցող մյուս բարդված ձևերը, բաղնիք, բաղարջ, բարծր>բ'անցըր բառերը և «գա» կապակցություն ունեցող գաղափար>գաղափար, գաղթական>գախտական բառերը:

¹ Յ.Աճառյան, «Քննություն Վանի բարբառի», Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Ե., 1953թ., էջ 19:

Դա, յա, ջա կապակցությամբ սկսվող բոլոր բառերը, առանց բացառության, փոխվել են դձ-ի, յձ-ի, ջձ-ի:

Այժմ մշեմք այն փոխառությունների մասին, որոնք սկսվում են մշված կապակցություններով: Արևելյան թուրքերենից (մույնը՝ ադրբեջաներեն) փոխառյալ բառերում ևս ակնհայտ են քմային արտասանություն ունեցող բձ, գձ, դձ, ծձ, ջձ կապակցությունները, մինչդեռ կլասիկ թուրքերենը (մույնը՝ արևմտյան տաճկերեն) չունի քմային հնչյուն:

Ինչպես մշում է Ղ.Աճառյանը, գավառական տաճկերենը ունի անհնչյունը, իսկ Պոլսի տաճկերենը չունի: Այս երևույթը գալիս է մեզ ասելու, որ երկարատև հարևանություն անելու շնորհիվ լեզուները հարմարվում են միմյանց և մեկ լեզվի հնչյունային օրենքները կարող են անցնել հարևան լեզվին: Եվ հենց այդ փաստի ցայտուն արտահայտությունն է հանդիսանում, որ Պոլսի տաճկերենը և Պոլսի հայերենը չունեն քմային արտասանություն ունեցող անհնչյունը, մինչդեռ Ղարաբաղում, Շամախիում, Ագուլիսում և հայկական մի շարք այլ գավառներում, ուր տարածված է գավառական տաճկերենը, լայն գործածություն ունի անհնչյունը (քմային ա) հնչյունը:

Սեզ թվում է, որ բառասկզբի բա, գա, դա, ծա, ջա հնչյունների քմայնացումը, որ Ղ.Աճառյանը բացատրում է որևէ լեզվի ազդեցությունից անկախ և բնորոշ է միայն Վանի բարբառին, պետք է ընդունել որոշ վերապահությամբ, որովհետև հայերենի եզրային բարբառներում այդ հակումը (ա-ի քմայնացումը) կա դեռևս 5-րդ դարից:

Այդ մասին է մշել մաս Ղ.Սուրադյանը «Ինչպես հասկանալ Աճառյանի օրենքը» հոդվածում². «Յնագույն բարբառային գեամ ձևին Ղարաբաղի, Ջանգեզուրի և Վանի բարբառներում այսօր համապատասխանում է կյձմ-ը, որոնց տարբերությունն այն է, որ մոր բարբառներում հին ծայնեղի դիմաց այսօր խուլ է: Ուրեմն, ա՞նձ փոփոխությունը ավելի հին է, քան ծայնեղի խլացումը: Գեամ բառածևը ակնարկում է հենց այդ նախնական վիճակը, երբ ծայնեղ պայթականի մոտ ա-ն քմայնացել էր, բայց ծայնեղը դեռևս խուլի չէր վերածվել: Այս բոլորից արվող տրամաբանական հետևությունն այն է, - այնուհետև շարունակում է Ղ.Սուրադյանը, - որ հայերենի մի շարք եզրային բարբառներում (հատկապես արևելյան) բացառված չէր քմայնացած ա-ի գոյությունը և ժամանակագրորեն այն հարում է բարբառների ձևավորման պատմական շրջանի սկզբին (5-րդ դար), թեև առաջացած կարող է լինել ավելի վաղ շրջանում»:

² Բանբեր Երևանի համալսարանի, 1973թ., հ. 2, էջ 169:

Հ.Սուրադյանի կողմից շեշտված հատկապես արևելյան բարբառներում ա-ի քմայնացման մասին տրամաբանական հետևությունը հաստատում է մեր այն կարծիքը, որ հնչյունական որոշ երևույթներ (տվյալ դեպքում ա-ի քմայնացումը) երկարատև ազդեցության արդյունք են:

Այդ մասին է խոսում նաև Հ.Աճառյանը. «Արդի լեզուներից մի ծայրը առատորեն ունի անզլերենը, բայց ֆրանսերենը, գերմաներենը, ինչպես նաև ռուսերենը չունեն:

Մեր շրջակա ազգերից «մ» ունեն կովկասյան լեզուները՝ պարսկերենը, քրդերենը, արևելյան թուրքերենը (նույնը՝ ադրբեջաներենը), բայց տաճկերենը չունի:

Առատորեն գտնվում է բոլոր ալթայական լեզուներում³:

Հետաքրքրական այն է, որ Աճառյանը ճիշտ է ներկայացրել ա-ի տարածման և այդ հնչյունով խոսող լեզուների մասին, մինչդեռ այլ հետևություն է հանգել և ա-ի քմայնացումը դիտարկել է որպես բ, գ, դ, ձ, ջ-ի խլացման հետևանքով առաջ եկած իրողություն՝ ետին պլան մղելով հայերենի երկարատև փոխշփումը կովկասյան լեզուների՝ պարսկերենի, քրդերենի և արևելյան թուրքերենի հետ: Ուրեմն, այստեղից հետևություն. Վանի և նրա ենթաբարբառ հանդիսացող (ըստ Հ.Աճառյանի) Ղիաղիների բարբառում գործածվող բա, գա, դա, ձա, ջա կապակցությունների փոփոխությունները պմ, կ'մ, տմ, ծմ, ժմ (Վանի բարբառում) և բմ, գ'մ, դմ, ջմ, ջմ (Ղիաղիների բարբառում) գավառական թուրքերենի, կովկասյան լեզուների՝ պարսկերենի, քրդերենի և արևելյան թուրքերենի ազդեցությամբ պետք է բացատրել:

Իսկ վերը նշված լեզուներում ա>մ փոփոխության ի հայտ գալը մեր ուսումնասիրության սահմաններից դուրս ենք համարում:

«Ա» հնչյունը հանդես է գալիս ինչպես բառասկզբում, նույնպես և բառամիջում և բառավերջում: Երկվանկ բառերի սկզբում ա-ն մնացել է անփոփոխ: Այսպես՝ ազատ>ազատ, աթոռ>աթոռ, ախոռ>ախոռ, աղեակ > աղէկ (լավ), աղիք>աղիք', աղջիկ>ախջիկ, աղուես>աղվէս, աղուն>աղուն, աղքատ>ախկատ, աղօթք>աղօթք, աման>աման, ամառն>ամառ, ամիս>ամիս, աներ>աներ, անիծ>անիծ, անուն>անուն, անպետք>անպետք', անտէր>անտեր, անքուն>անք'ուն, աշխարհ>աշխարհ, աշուն>աշուն, ապրանք>ապրանք', առակ >առակ, առնել>ենել, ասել>ասել, ասեղն>ասեղն, աստառ>աստառ, ատել>ատել, անէծք>անէծք, անձրև>անձըվեր, աւագ>ավագ, անդամ>անթամ և այլն:

Բառասկզբում մ-ով հանդես են գալիս համեմատաբար քիչ բառեր:

³ Հ.Աճառյան, «Բնություն Վանի բարբառի», Ե., 1953թ., էջ 17:

Այսպես՝ ազապ>ազաբ, ամբար>ամբար, արդար>արժան, արժանի> անժանի, արժանանալ>անժանանալ, արժել>անժել, անկեալ>անգ՛ալ:

Մի շարք բառերի սկզբից (անկախ վանկերի քանակից) «հ» հազագի ավելացման պատճառով բառասկզբի ա-ն փոխվել է մ-ի. օրինակ՝ առաջ> հանռէ, առաջնեակ>հանռչընեկ, առիք>հանռիք¹, առաջին>հանռչին, աչք>հանչկ, աղբիւր>հանխաւուր, առու>հանռու:

Ա-ով սկսվող 2 բառ բառասկզբում ստացել են խ հնչյունը. ալևոր> հալիվոր>խմիվոր և հազնել>ազանիլ>խանք՛նել (ի>խ հնչյունափոխությամբ):

Աճառյանի օրենքով պետք է բացատրել զրաբարի ծայնեղ պայթական-ների և պայթաշփականների փոփոխությունները: Գրաբարի այն ծայնեղ պայթականները և պայթաշփականները, որոնք բարբառում ենթարկվել են խլացման (ոչ լրիվ) բ՛, գ՛, դ՛, ծ՛, ջ՛, զ՛ ընդունում են ա, իսկ այն հնչյունները, որոնք մնացել են անփոփոխ, մախորդում են ա-ի: Այսպես, օրինակ՝

ա) Բազէ>բ՛ազէ, բազուկ>բ՛ազուկ, բաժանել>բ՛աժնել, բաժին>բ՛աժին, բախտ> բ՛ախտ, բամբակ>բ՛ամպակ, բառնալ>բ՛առնալ, բարակ>բ՛արակ, բարեկամ>բ՛արեկամ, բարի>բ՛արի, բարձ>բ՛առն, բարև>բ՛արեվ և այլն:

Բայց՝ բաղ>բաղ, բաղարջ>բաղարջ, բաշխել>բաշխել, բառ>բառ, բարդ>բառք:

բ) Դաշտ>դ՛աշտ, դառն>դ՛առ, դառնալ>դ՛առնալ, դաս>դ՛աս, դատ> դ՛ատ, դատաստան>դ՛ատաստան, դատարկ>դ՛ատտակ, դար>դ՛ար, դարբին> դ՛արպին, դարման>դ՛արման և այլն:

Բայց՝ դանդաղ>դանդաղ, դահիճ>դահիճ, դողոշ>դօղօշ:

գ) Ձախ>ձ՛ախ, ծավար>ծ՛ավար, ծագ>ծ՛աք՛:

դ) Ջաղաց>ջ՛աղաց, ջարդել>ջ՛առթել:

Վերոհիշյալ ա>մ փոփոխությունը, ինչպես նշեցինք, տեղի է ունեցել Աճառյանի օրենքի համաձայն, միայն այն տարբերությամբ, որ Վանի բարբառում զրաբարի բ, գ, դ, ծ, ջ բաղաձայնները բառասկզբում դառնում են խուլեր՝ պ, կ՛, տ, ծ, իսկ Դիաղինի բարբառում այդ երևույթը (ծայնեղենների խլացում) լրիվ տեղի չի ունեցել, այլ, կարծես, խլացման ճանապարհին լինի և ծայնեղները տատանվում են ծայնեղների և խուլերի միջև, սակայն, հնչյունների արտասանության տեսակետից մոտ են բ-ին, գ-ին, դ-ին, ձ-ին, ջ-ին:

Այս երևույթը, ինչպես նշեցինք, արևելյան տաճկերենի (նույնը՝ ադրբեջաներենում) ազդեցությամբ պետք է բացատրել⁴:

⁴ Ադրբեջանցիները դիաղինցիների հետ հարևանություն են անում շուրջ 150 տարի: Դիաղինցիները այստեղ են գաղթել (Վարդենիս) 1826-1828թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո:

Գ՝ քմային արտասանություն ունեցող հնչյունը նույնպես պահանջում է
ն: Այսպես, օրինակ՝ գառն>գ'նռ, գառ>գ'նճ, գամ>գ'մմ (ամուր մեխ),
գամել>գ'մմել, գանգատ>գ'ննգ'նտ, գարի>գ'արի, գարուն>գ'արուն, գալան>
գ'մվնգ'ն, գազ>գ'նզ, գանգակ>գ'ննգ'նկ, կորնգան>կօրնգ'ն:

Բացառություն են կազմում գաղափար>գաղափար և գաղթական>
գախտական բառերը, որոնք, նախորդ բառերի հետ համեմատած, ավելի ուշ
շրջանի արդյունք են և վերը նշված հնչյունական օրենքին (քմայնացում) չեն
ենթարկվել: Սակայն նույնը չի կարելի ասել ք՝ քմային հնչյունի մասին, որը
հավասարապես ընդունում է և՛ ա, և՛ ն:

Եղած օրինակները հետևյալներն են. քաղհան>ք'ախաք', քամել>
ք'ամել, քանդել>ք'անդել, բայց՝ քաթան>ք'մթնն, քավթար>ք'մվթնռ, քարթու>
ք'մթու, քարշել>ք'մշել:

Կից վանկի ա ծայնավորի ներդաշնակությամբ պետք է բացատրել
դադար>դ'ատնր, անդամալոյծ>անթմնմլուծ, ապրայ>հմրրն, արծակ>
հմռցմկ, չաչրարանք>չմրչմրնք', ամբար>ամբնր բառերը:

Ժ բաղաձայնին հաջորդող ա ծայնավորը, առանց բացառության,
բարբառում հանդես է գալիս մ ձևով: Այսպես՝ ժամ>ժմմ, ժամաւոր>ժմմմվոր,
ժանգ>ժմնգ', ժառանգ> ժմննգ', շարժուն>ժմմնն, ժանգոտիլ>ժմնգ'օտել,
ժանգոտ>ժմնգ'ըռոտ, վարժապետ>վմնժմպետ:

Ամա՝ փոփոխությունը կարելի է նկատել խ-ով սկսվող միայն 3 բառում,
այն էլ այն դեպքում, երբ բառասկզբի հ-ն վերածվել է խ-ի:

Դրանք են՝ հարիւր>խմրիւր, հազար>խմզար և համբարծում>
խմմբմնոցում (կրոնական տոն), որից և ունենք խմմբմնոցում հատուկ անունը:

Մնացած բոլոր դեպքերում, ինչպես բառասկզբի հ>խ փոփոխության,
այնպես էլ խ-ով սկսվող բոլոր բառերում, խ-ին հաջորդում է մաքուր ա:

Այսպես՝ հազալ>խազալ, հա>խա, հալել>խալել, համ>խամ, համրել>
խամրրել, հայելի>խայլի, հանգիստ>խանգ'իստ, հաչել>խաչալ, հասանել>
խասնել, հասուցանել>խասընցել, հաստ>խաստ, հաստանալ>խաստընալ,
հաստութիւն>խաստություն, հատ>խատ, հարսն>խառս, խաբել>խափել,
խախտել>խախտել, խաղող>խավող, խաղալ>խաղալ, խագ>խագ, խաղ>խաղ,
խանձրահոտ>խանձըրախոտ և այլն:

Մնացած բոլոր դեպքերում, չկա մի հաստատուն կանոն, ըստ որի ա>ն
փոփոխությունը հաստատուն լինի, այլ կերպ ասած, ինչպես ՀԱճառյանն է նշում,
ա>ն փոփոխությունը ամբողջապես պարզել հնարավոր չէ⁵:

⁵ Հ.Աճառյան «Քննություն Վանի բարբառի», Եր., 1953թ., էջ 24:

Վանի բարբառում ա>ն փոփոխությունը (խ-ից հետո) հաստատուն է մասամբ (բացառություն են կազմում խարազան>խնրեզնն, խանձրել>խննձըրել և խանրահամ>խննձըրխամ բառերը): Մինչդեռ, առանց բացառության /ա>ա/ գործում է բարբառում խարազան>խառզան, խանձրել>խանձըրել, խանձրահոտ>խանձըրախոտ:

Հետաքրքիր է նշել, որ Վանի բարբառում ա>ա, այսինքն՝ փոփոխության չենթարկված բառերից բացառություն կազմողները հազ>խննզ, հազալ>խննզալ, ձին բառի սեռական հոլովը ձին>ծնն, ինչպես նաև ափ և թուփ բառերի սեռական հոլովները՝ ափ>ափնն, թուփ>թըփնն, Դիադինի բարբառում հանդես են գալիս անփոփոխ՝ համապատասխանաբար հազ>խազ, հազալ>խազալ, ձին բառի սեռական հոլովը ձին>ծան, ինչպես նաև ափ և թուփ բառերի սեռական հոլովները՝ ափ>ափան, թուփ>թըփան, Դիադինի բարբառում հանդես են գալիս անփոփոխ՝ համապատասխանաբար հազ>խազ, հազալ>խազալ, ձին>ծան, ափ>ափան, թուփ>թըփան ձևերով:

Արդի գրական հայերենի ազդեցությամբ պետք է բացատրել, որ Վանի բարբառի ա>ա փոփոխության ենթարկված բազմաթիվ բառեր, Դիադինի բարբառում պարզվել և դարձել են մաքուր ա: Ստորև ներկայացնում ենք այդ փոփոխությունները գրաբարի, Վանի և Դիադինի բարբառների միջև:

Գրաբար	Վանի բարբառ	Դիադինի բարբառ
Աղաչանք	անղանք	աղաչանք ¹
աւազան	անվան	ավազան
գդակ	կտմկ	գըթակ

Երեք և ավելի վանկով բառերի մեջ վանկերի ա ծայնավորը, ընդհանրապես, ընկնում է կամ փոխվում է ը-ի: Այսպես, օրինակ՝

ազանիլ - խաք ¹ նել	ամաչել - ամչընալ
ականատ - ակնաթ	իմանալ - հիմնալ
անազան - հննք ¹ նն	իջանել - հիջնել

Ա-ի սղման այս օրենքին չեն ենթարկվում գրական և կրոնական լեզվից կատարված փոխառությունները:

Այսպես՝ ավազակ>ավազակ, արքայութիւն>արքայություն, ապաշխարանք>ապաշխարանք¹, աստուած>աստղված, անասուն>անասուն, աւազան>ավազան, ալելու>ալէլու, բամբասել>բամպասել, խոստանալ>խոստանալ:

«Հ» հազագի ավելացմամբ պետք է բացատրել ամեն>հըմեն, արժան>հեժան, ավել>հէվել, անցնել>հընցընել, անկանել>հընգ¹նել բառերի փոփոխությունը: Ա ծայնավորի հնչյունափոխության մասնավոր դեպքեր են.

ա>է - գդալ>գ¹ըտել, վարդավառ>վ¹առթէվ¹ար, արմուկն>էրմունք¹:

ա>օ - ուղարկել>օղօրկել, թառամել>թօռմել: